քաղաքացիական գործի շրջանակներում «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շահերի ներկայացու, հայցադիմումի պատասխանի և անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ դիրքորոշման ներկայացում, դատական ներկայացուցչության ապահովում: 1.1.4. Թիվ ԵԴ2/7626/02/24 քաղաքացիական գործով www.cabinet.armlex.am համակարգում փաստաթղթերի, ապացույցների և առարկությունների մուտքագրում և բեռնում, նշված քաղաքացիական գործով www.cabinet.armlex.am փաստաթղթաշրջանառության վերահսկում: համակարգով Պայմանագրի 2.1. կետի համաձայն՝ Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն պարտավորվում է վճարել 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ: Խնդրում է տվյալ գումարը, այն է՝ երեք հարյուր հազար ՀՀ դրամը որպես փաստաբանի խելամիտ վարձատրություն գումար ներառել սույն գործով դատական ծախսերի կազմում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի՝գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Տվյալ դեպքում, փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը /ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը/, գործի բարդությունը: Վերոնշյալ պատճառաբանությամբ, գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար է հանդիսանում 50.000 ՀՀ դրամը, ուստի այդ գումարը պետք է բռնագանձել Հայցվորից հօգուտ Պատասխանողի:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Ագաստ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 21.02.2024թվականին կնքված թիվ «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

«Ագաստ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*